ACCU-CHEK® Instant

Roche

Օգտագործողի ձեռնարկ

Արյան մեջ գլյուկոզայի մակարդակը չափող սարք

ACCU-CHEK®

Բովանդակություն

Ներածություն 2

1-ին գլուխ Ձեր նոր համակարգը.....4

2-ին գլուխ Արյան մեջ գլյուկոզայի մակարդակի չափման թեստեր 8

3-ին գլուխ Ստուգիչ թեստեր 16

4-ին գլուխ Ձեր տվյալների ստուգում 21

5-ին գլուխ Անլար հաղորդակցում և չափող սարքի կցորդում 23

6-ին գլուխ Անհատական համակարգչին միացումը 25

7-ին գլուխ Չափող սարքի պահպանումը և ծագած խնդիրների լուծումը.....26

8-ին գլուխ Տեխնիկական տեղեկություններ 36

9-ին գլուխ Երաշխիք 43

Ցանկ 44

Accu-Chek Instant համակարգ

The Accu-Chek Instant թեստի շերտերը նախատեսված են Accu-Chek Instant չափող սարքի միջոցով մատից, ձեռքի ափից, նախաբազկից կամ բազկից թարմ ամբողջական մազանոթային արյան գլյուկոզայի քանակական չափման համար՝ շաքարի մակարդակի արդյունավետ վերահսկման նպատակով:

The Accu-Chek Instant թեստի շերտերը Accu-Chek Instant չափող սարքի հետ միասին նախատեսված են շաքարային դիաբետ ունեցող մարդկանց համար՝ շաքարի մակարդակի ինքնուրույն in vitro ախտորոշման համար:

The Accu-Chek Instant թեստի շերտերը Accu-Chek Instant չափող սարքի հետ միասին նախատեսված են բուժաշխատողների համար՝ շաքարի մակարդակի կլինիկական պայմաններում in vitro ախտորոշման համար: Երակային, զարկերակային և նորածինների վերցված արյան ստուգումը կատարում են միայն բուժաշխատողները:

Այս համակարգը նախատեսված չէ շաքարային դիաբետի ախտորոշման, ինչպես նաև պորտալարային արյան նմուշների ստուգման համար:

Նպատակահարմար է ինքնաստուգման համար

Համակարգը ներառում է.

Accu-Chek Instant չափող սարք մարտկոցներով, Accu-Chek Instant թեստի շերտեր* և Accu-Chek Instant ստուգիչ լուծույթներ*:

*Որոշ առարկաներ կարող են ներառված չլինել փաթեթում: Դրանք վաճառվում են առանձին:

⚠ ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

- **Առկա է շնչահեղձ լինելու վտանգ: Պարունակում է մանր մասեր: Պահե՛ք 3 տարին չլրացած երեխաների համար անհասանելի տեղում:**
- **Նոր և օգտագործված մարտկոցները հեռու պահեք երեխաներից: Կուլ տալը կամ մարմնի մեջ մտցնելը կարող է առաջացնել քիմիական այրվածքներ, փափուկ հյուսվածքների ծակում, ինչպես նաև մահ: Ծանր այրվածքները կարող են առաջանալ կուլ տալուց հետո 2 ժամվա ընթացքում: Եթե կարծում եք, որ մարտկոցը կարող է կուլ տրված լինել կամ մտած լինել մարմնի որևէ մասի ներսում, անմիջապես բժշկական օգնություն հայցեք:**
- **Եթե մարտկոցի խցիկը ապահով կերպով չի փակվում, դադարեք օգտագործել չափող սարքը և պահեք երեխաների համար անհասանելի տեղում: Դիմեք Roche ընկերությանը:**
- **Ցանկացած առարկա, որը շփվում է մարդու արյան հետ, վարակի հնարավոր աղբյուր է (տես Clinical and Laboratory Standards Institute: Protection of Laboratory Workers from Occupationally Acquired Infections; Approved Guideline – Fourth Edition; CLSI document M29-A4, May 2014).**

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Խստորեն խորհուրդ է տրվում ունենալ թեստի անցկացման պահեստային լուծումներ: Թեստի անցկացման ձախողումը կարող է հանգեցնել թերապիայի որոշումների հետաձգմանը և առաջացնել լուրջ առողջական խնդիրներ: Թեստի անցկացման պահեստային լուծումների օրինակ է պահեստային չափող սարք և թեստի շերտեր ունենալը: Հարցրեք ձեր բուժաշխատողին կամ դեղագործին՝ թեստի անցկացման պահեստային լուծումների այլ հնարավոր տարբերակների մասին:

1 Ձեր նոր համակարգը

Accu-Chek Instant չափող սարք

Տեսքը աջ կողմից | Տեսքը դիմացից | Տեսքը ձախ կողմից

1. **Չափող սարքի կոճակ**
   Սեղմեք՝ չափող սարքը միացնելու և անջատելու, հաջորդ էկրանին անցնելու կամ ընտրություն կատարելու համար:

2. **Էկրան**
   Ցույց է տալիս արդյունքները, հաղորդագրությունները և հիշողության մեջ պահված թեստերի արդյունքները:

3. **Թիրախային միջակայքի ցուցիչ**
   Ցույց է տալիս՝ արդյոք ձեր արյան մեջ գլյուկոզայի մակարդակը նախապես սահմանված միջակայքի արժեքից բարձր է, ցածր, թե միջակայքի սահմաններում:

4. **Միկրո USB մուտք**
   Չափող սարքից տվյալները փոխանցում է համակարգչին (ԱՀ):

1 Ձեր նոր համակարգը

Տեսքը հետևից

Տեսքը ներքևից

5. Մարտկոցի դռնակ

Բացեք՝ մարտկոցները փոխելու համար:

6. Թեստի շերտի ճեղք

Տեղադրեք թեստի շերտն այստեղ:



7. Թեստի շերտերի տարա*

(օրինակ)

8. Թեստի շերտ՝ մետաղական ծայրը

Այս ծայրը մտցրեք չափող սարքի մեջ:

9. Թեստի շերտ՝ դեղին ծայր

Արյան կաթիլը կամ ստուգիչ լուծույթը հպեք այստեղ:

10. Ստուգիչ լուծույթի շիշ*

11. Մարտկոցներ

12. USB մալուխ*

Չափող սարքը միացնում է համակարգչին:

*Որոշ առարկաներ կարող են ներառված չլինել փաթեթում: Դրանք վաճառվում են առանձին:

1 Ձեր նոր համակարգը

Չափող սարքի կոճակի օգտագործումը

Ձեր նոր չափող սարքն ունի միայն մեկ կոճակ, սակայն այն կատարում է բազմաթիվ գործողություններ: Մեկ անգամ սեղմեք չափող սարքի կոճակը՝ չափող սարքը միացնելու և ձեր արյան մեջ գլյուկոզայի մակարդակի ամենավերջին արդյունքը տեսնելու համար: Շարունակեք սեղմել՝ տեսնելու համար ձեր 7, 30 և 90 օրվա արյան մեջ գլյուկոզայի մակարդակի միջին արդյունքը:

Երբ հրահանգ տրվի սեղմել չափող սարքի կոճակը, կարճատև սեղմեք այն ու թողեք:

Երբ հրահանգ տրվի սեղմել և **պահել** չափող սարքի կոճակը, սեղմեք և պահեք այն 3 կամ ավելի վայրկյան:

Ժամանակն ու ամսաթիվը

Չափող սարքի ժամանակն ու ամսաթիվը ցուցադրելու կամ փոխելու համար չափող սարքը կցեք բջջային սարքին կամ այն միացրեք համակարգչին, որտեղ տեղադրված է շաքարային դիաբետի կառավարման ծրագիր: Հետևեք շաքարային դիաբետի կառավարման ծրագրի հրահանգներին՝ ժամանակը և ամսաթիվը սահմանելու համար: Չափող սարքի էկրանն այնուհետև ցույց կտա ժամանակը և ամսաթիվը՝ ձեր թեստի արդյունքների հետ միասին:

Թիրախային միջակայք

Խորհրդակցեք ձեր բժշկի հետ՝ արյան մեջ գլյուկոզայի մակարդակի՝ ձեզ համապատասխան միջակայքի վերաբերյալ: Շատ կարևոր է մնալ ձեր թիրախային միջակայքի սահմաններում:

Թիրախային միջակայքը կանխադրված է՝ 70–160 մգ/դլ (3,9–8,9 մմոլ/լ): Թիրախային միջակայքը կարող է սահմանվել ցածր սահմանից՝ 60–140 մգ/դլ (3,3–7,8 մմոլ/լ), մինչև բարձր սահմանը՝ 90–300 մգ/դլ (5,0–16,6 մմոլ/լ):

Թիրախային միջակայքը փոխելու համար չափող սարքը կցեք բջջային սարքին կամ այն միացրեք համակարգչին, որտեղ տեղադրված է շաքարային դիաբետի կառավարման ծրագիր: Այնուհետև հետևեք շաքարային դիաբետի կառավարման ծրագրի հրահանգներին:

⚠ ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Այս գործառույթը չի փոխարինում հիպոգլիկեմիայի թեմայով ձեր բժշկի ստացած վերապատրաստմանը:

1 Ձեր նոր համակարգը

Նշաններ

Նշան	Նկարագրություն
	Վերջին թեստի արդյունքի նշան: Սա ցույց է տալիս, որ դուք դիտում եք ձեր արյան մեջ գլյուկոզայի մակարդակի վերջին արդյունքը:
7 day avé	7-օրվա միջին նշան: Սա ցույց է տալիս, որ դուք դիտում եք ձեր արյան մեջ գլյուկոզայի մակարդակի 7-օրվա միջին արդյունքը:
30 day avé	30-օրվա միջին նշան: Սա ցույց է տալիս, որ դուք դիտում եք ձեր արյան մեջ գլյուկոզայի մակարդակի 30-օրվա միջին արդյունքը:
90 day avé	90-օրվա միջին նշան: Սա ցույց է տալիս, որ դուք դիտում եք ձեր արյան մեջ գլյուկոզայի մակարդակի 90-օրվա միջին արդյունքը:
	Կաթիլի նշան
	Bluetooth-ի նշան
	Ստուգիչ 22ի նշան
	Ավազի ժամացույցի նշան
	Մարտկոցի ցածր լիցքի նշան
- - -	Տվյալներ չկան ցուցադրելու համար
	Կցորդման նշան:
	Թիրախային միջակայքի ցուցիչի սլաք: Երբ թարթում է, նշանակում է, որ ձեր արյան մեջ գլյուկոզայի մակարդակի արդյունքը թիրախային միջակայքից դուրս է:
	Ջերմաստիճանի նախազգուշացնող նշան
	Անլար հաղորդակցման նշան:

⚠ ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Արյան մեջ գլյուկոզայի մակարդակի չափման արդյունքները կարող են ցուցադրվել մգ/դլ-ով կամ մմոլ/լ-ով: Չափող սարքի հետնամասի պիտակը ցույց է տալիս չափման միավորը: Եթե չափող սարքը ցույց է տալիս սխալ չափման միավորը, կապվեք Roche ընկերության հետ: Եթե չգիտեք, թե որ չափման միավորն է ճիշտ ձեզ համար, դիմեք ձեր բժշկին: Չափման սխալ միավորի օգտագործումը կարող է պատճառ դառնալ ձեր արյան մեջ գլյուկոզայի իրական մակարդակի սխալ մեկնաբանության և կարող է հանգեցնել ոչ պատշաճ բուժման:

Այստեղ տպված է մգ/դլ կամ մմոլ/լ

Accu-Chek Instant համակարգի օգտագործումը

- Օգտագործեք միայն Accu-Chek Instant թեստի շերտեր:
- Թեստի շերտերի տարայից թեստի շերտը հանելուց հետո անմիջապես օգտագործեք:
- Արյուն կամ ստուգիչ լուծույթ մի՛ հպեք թեստի շերտին՝ նախքան չափող սարքի մեջ տեղադրելը:
- Թեստի մի շերտ հանելուց հետո թեստի շերտերի տարան անմիջապես ամուր փակեք՝ թեստի շերտերը խոնավությունից պաշտպանելու համար:
- Չօգտագործած թեստի շերտերը պահպանեք իրենց սկզբնական տարայի մեջ՝ կափարիչը փակած վիճակում:
- Ստուգեք պիտանելիության ժամկետը թեստի շերտերի տարայի վրա: Այդ ժամկետից հետո մի՛ օգտագործեք թեստի շերտերը:
- Թեստի շերտերի տարան և չափող սարքը պահպանեք զով, չոր տեղում, օրինակ՝ ննջարանում:
- Թեստի շերտերի պահպանման և համակարգի օգտագործման պայմաններին ծանոթացեք թեստի շերտերի փաթեթի ներդիրում:

⚠ ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Թեստի շերտերը մի՛ պահպանեք բարձր ջերմության և խոնավության վայրերում (լողասենյակում կամ խոհանոցում): Ջերմությունը և խոնավությունը կարող են վնասել թեստի շերտերը:

Արյան մեջ գլյուկոզայի մակարդակի չափման թեստ կատարելը ձեր մատի ծայրից վերցված արյունով

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- Արյան մեջ գլյուկոզայի մակարդակը չափելու համար ձեզ անհրաժեշտ է չափող սարք, թեստի շերտ և մաշկը ծակող սարք՝ տեղադրված նշտարով:
- Արյան մեջ գլյուկոզայի մակարդակը հնարավոր չի լինի չափել, երբ չափող սարքը միացված է համակարգչին USB մալուխով:

1

Ձեռքերը լվացեք տաք օճառաջրով և լավ չորացրեք:

Նախատրաստեք մաշկը ծակող սարքը:

2

Ստուգեք պիտանելիության ժամկետը թեստի շերտերի տարայի վրա:

Մի՛ օգտագործեք պիտանելիության ժամկետը լրացած թեստի շերտեր:

3

Թեստի շերտերի տարայից թեստի մի շերտ հանեք:

Կափարիչն ամուր փակեք:

4

Թեստի շերտի մետաղական ծայրը մտցրեք չափող սարքի մեջ: Չափող սարքը կմիանա:

5

Երբ հայտնվի թարթող կաթիլի նշանը, մաշկը ծակող սարքով ծակեք մատը:

6

Կամաց սեղմեք ձեր մատը՝ օգնելու արյան հոսքին: Դա կօգնի ձեզ արյան կաթիլ ստանալ:

7

Հպեք թեստի շերտի **դեղին ծայրը** արյան կաթիլին: Հեռացրեք ձեր մատը թեստի շերտից, երբ հայտնվի թարթող ավազի ժամացույցի նշանը: Թեստի շերտի վրա արյուն մի՛ դրեք:

8

կամ

Կապույտ
Թեստի արդյունքը թիրախային միջակայքից բարձր է:

Կանաչ
Թեստի արդյունքը թիրախային միջակայքի սահմաններում է:

Կարմիր
Թեստի արդյունքը թիրախային միջակայքից ցածր է:

Ձեր թեստի արդյունքը հայտնվում է սլաքով: Այս սլաքը ցույց է տալիս, թե ձեր թեստի արդյունքը թիրախային միջակայքից բարձր է, ցածր, թե միջակայքի սահմաններում:* Թիրախային միջակայքը ներկայացված է թիրախային միջակայքի ցուցիչի կանաչ շրջանում: Սլաքը կթարթի, եթե ձեր թեստի արդյունքը այս միջակայքից բարձրանա կամ իջնի:

Հանեք և դեն նետեք օգտագործված թեստի շերտը:

*Թիրախային միջակայքը կանխադրված է՝ 70–160 մգ/դլ (3,9–8,9 մմոլ/լ): Թիրախային միջակայքը փոխելու համար չափող սարքը կցեք բջջային սարքին կամ այն միացրեք համակարգչին, որտեղ տեղադրված է շաքարային դիաբետի կառավարման ծրագիր: Խորհրդակցեք ձեր բժշկի հետ՝ նախքան թիրախային միջակայքը փոխելը:

Արյան մեջ գլյուկոզայի մակարդակի չափման թեստ կատարելը ձեր ձեռքի ափից, նախաբազկից կամ բազկից (թեստ այլընտրանքային տեղերից, AST)

⚠ ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Մի՛ օգտագործեք այլընտրանքային տեղերից թեստը՝ գլյուկոզայի շարունակական ստուգման համակարգը կարգավորելու կամ ինսուլինի չափաբաժնի հաշվարկներ կատարելու նպատակով:

Դուք ունեք տարբերակ՝ արյան փորձանմուշ ստանալու ձեր մարմնի այլ տեղերից՝ բացի մատի ծայրից: Այլընտրանքային տեղերն են՝ ձեռքի ափը, նախաբազուկը և բազուկը:

Մատի ծայրից և ձեռքի ափից ստացված արյունը կարելի է ցանկացած ժամանակ օգտագործել՝ կատարելու արյան մեջ գլյուկոզայի մակարդակի չափման թեստ:

Եթե օգտագործվում է նախաբազկից կամ բազկից վերցված արյուն, որոշակի ժամանակներում թեստ կատարելը նպատակահարմար չէ: Պատճառն այն է, որ ձեր արյան մեջ գլյուկոզայի մակարդակը ավելի արագ է փոփոխվում ձեր մատի ծայրի և ձեռքի ափի մեջ, քան՝ նախաբազկի և բազկի մեջ: Այս տարբերությունները կարող են պատճառ դառնալ ձեր կողմից արյան մեջ գլյուկոզայի իրական մակարդակի սխալ մեկնաբանությանը՝ հանգեցնելով ոչ պատշաճ բուժման և առողջության համար հնարավոր բացասական հետևանքների:

2 Արյան մեջ գլյուկոզայի մակարդակի չափման թեստեր

Կարդացեք հաջորդ բաժինը՝ նախքան կփորձեք թեստ կատարել նախաբազկից կամ բազկից վերցված արյան նմուշով:

Դուք կարող եք թեստ կատարել նախաբազկից կամ բազկից վերցված արյան նմուշով	• ուտելուց անմիջապես առաջ: • քաղցած վիճակում:
Դուք ՉԵՔ կարող թեստ կատարել նախաբազկից կամ բազկից վերցված արյան նմուշով	• ուտելուց հետո մինչև 2 ժամ, երբ արյան մեջ գլյուկոզայի մակարդակի արժեքները կարող են արագորեն բարձրանալ: • բոլուսային ինսուլինի ներարկումից հետո, երբ արյան մեջ գլյուկոզայի մակարդակի արժեքները կարող են արագորեն նվազել: • վարժություններ կատարելուց հետո: • երբ հիվանդ եք: • եթե կարծում եք, որ ձեր արյան մեջ գլյուկոզայի մակարդակը ցածր է (հիպոգլիկեմիա): • եթե երբեմն չեք նկատում, երբ ձեր արյան մեջ գլյուկոզայի մակարդակը ցածր է լինում:

Եթե հետաքրքրված եք թեստեր կատարելու այլընտրանքային տեղերից (AST), նախ խոսեք ձեր բժշկի հետ:

Այլընտրանքային տեղերից արյուն վերցնելու համար AST ծայրապանակ ձեռք բերելու և այլընտրանքային տեղերից կատարվող թեստերի (AST) մանրամասն ցուցումներ ստանալու համար դիմեք Roche ընկերությանը:

Արյան մեջ գլյուկոզայի մակարդակի արտասովոր արդյունքներ

Եթե ձեր արյան մեջ գլյուկոզայի մակարդակի արդյունքը չի համապատասխանում ձեր ինքնազգացողությանը, ստուգեք այս ցուցակը, որը կօգնի լուծել խնդիրը:

Ստուգումներ՝ խնդիրների լուծման նպատակով	**Գործողություն**
Ձեր ձեռքերը լվացե՞լ էիք:	Ձեռքերը լվացեք տաք օճառաջրով և լավ չորացրեք: Կրկնեք արյան մեջ գլյուկոզայի մակարդակի չափումը՝ նոր թեստի շերտով:
Թեստի շերտերը ժամկետա՞նց էին:	Դեն նետեք թեստի շերտերը, եթե դրանց պիտանելիության ժամկետը լրացել է: Կրկնեք արյան մեջ գլյուկոզայի մակարդակի չափումը՝ պիտանելիության ժամկետը չլրացած թեստի շերտով:
Թեստի շերտերի տարայի կափարիչը միշտ ամուր փակվա՞ծ է եղել:	Թեստի շերտերը փոխարինեք նորերով, եթե կարծում եք, որ թեստի շերտերի տարան որոշ ժամանակ մնացել է բաց վիճակում: Կրկնեք արյան մեջ գլյուկոզայի թեստը:
Թեստի շերտերի տարայից թեստի շերտը հանելուց հետո անմիջապես օգտագործվե՞լ է:	Կրկնեք արյան մեջ գլյուկոզայի մակարդակի չափումը՝ նոր թեստի շերտով:
Թեստի շերտերը պահպանվե՞լ են զով, չոր տեղում:	Կրկնեք արյան մեջ գլյուկոզայի մակարդակի չափումը՝ պատշաճ կերպով պահպանված թեստի շերտով:
Դուք հետևե՞լ եք հրահանգներին:	Տեսեք Արյան մեջ գլյուկոզայի մակարդակի չափման թեստեր գլուխը և կրկնեք արյան մեջ գլյուկոզայի մակարդակի չափման թեստը: Եթե դարձյալ խնդիրներ ունեք, դիմեք Roche ընկերությանը:
Չափող սարքը և թեստի շերտերը պատշաճ կերպով գործո՞ւմ են:	Կատարեք ստուգիչ թեստ: Տե՛ս Ստուգիչ թեստեր գլուխը՝ հրահանգների համար:
Դեռևս վստահ չե՞ք, որ խնդիրը լուծվել է:	Դիմեք Roche ընկերությանը:

Արյան մեջ գլյուկոզայի ցածր կամ բարձր մակարդակի ախտանշաններ

Արյան մեջ գլյուկոզայի ցածր կամ բարձր մակարդակի ախտանշաններին տեղյակ լինելը կարող է ձեզ օգնել հասկանալ ձեր թեստերի արդյունքները և որոշել, թե ինչ անել, եթե այդ արդյունքները թվում են արտասովոր:

Արյան մեջ գլյուկոզայի ցածր մակարդակ (հիպոգլիկեմիա). Հիպոգլիկեմիայի ախտանշանները կարող են ներառել, սակայն չսահմանափակվել հետևյալով՝ անհանգստություն, դողդոջություն, քրտնարտադրություն, գլխացավ, քաղցի ուժեղացած զգացում, գլխապտույտ, մաշկի գունատ երանգ, տրամադրության հանկարծակի փոփոխություն կամ դյուրագրգռություն, հոգնածություն, կենտրոնանալու դժվարություն, դժվարաշարժություն, սրտխփոց և (կամ) շփոթմունք:

Արյան մեջ գլյուկոզայի բարձր մակարդակ (հիպերգլիկեմիա). Հիպերգլիկեմիայի ախտանշանները կարող են ներառել, սակայն չսահմանափակվել հետևյալով՝ ծարավի ուժեղացած զգացում, հաճախամիզություն, մշուշված տեսողություն, քնկոտություն և/կամ քաշի անբացատրելի կորուստ:

⚠ ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Եթե ունեք նշված ախտանշաններից որևէ մեկը, կամ այլ արտասովոր ախտանշաններ, չափեք ձեր արյան մեջ գլյուկոզայի մակարդակը մատի ծայրից կամ ձեռքի ափից վերցված արյան նմուշով: Եթե ձեր արյան մեջ գլյուկոզայի մակարդակը ցուցադրվում է որպես LO կամ HI, անմիջապես դիմեք ձեր բժշկին:

Երբ կատարել ստուգիչ թեստ

Ստուգիչ թեստ կատարելը ձեզ թույլ է տալիս իմանալ, թե արդյոք չափող սարքը և թեստի շերտերը պատշաճ կերպով են գործում: Դուք պետք է կատարեք ստուգիչ թեստ, երբ.

- բացում եք թեստի շերտերի նոր տուփ:
- բաց եք թողել թեստի շերտերի տարան:
- կարծում եք, որ թեստի շերտերը վնասված են:
- ցանկանում եք ստուգել չափող սարքը և թեստի շերտերը:
- թեստի շերտերը պահպանված են եղել ծայրահեղ ջերմաստիճանների, խոնավության պայմաններում, կամ՝ երկուսը միասին:
- վայր եք գցել չափող սարքը:
- ձեր թեստի արդյունքը չի համապատասխանում ձեր ինքնազգացողությանը:
- ցանկանում եք ստուգել, թե թեստն արդյոք ճիշտ եք կատարում:

Ստուգիչ լուծույթների մասին

- Օգտագործեք միայն Accu-Chek Instant ստուգիչ լուծույթներ:
- Օգտագործելուց հետո ամուր փակեք ստուգիչ լուծույթի շիշը:
- Շշի պիտակին գրեք ամսաթիվը, երբ բացել եք ստուգիչ լուծույթի շիշը: Ստուգիչ լուծույթի շիշը պետք է դեն նետել բացելուց 3 ամիս հետո (դեն նետելու ամսաթիվ) կամ 22ի պիտակին տպված պիտանելիության ժամկետը լրանալու օրը, որը որ ավելի վաղ է:
- Մի՛ օգտագործեք ստուգիչ լուծույթը, որի պիտանելիության ժամկետը լրացել է կամ դեն նետելու ամսաթիվն անցել է:
- Ստուգիչ լուծույթի պահպանման պայմանների համար նայեք ստուգիչ լուծույթի փաթեթի ներդիրը:
- Չափող սարքն ինքնաշխատ կերպով ճանաչում է տարբերությունը ստուգիչ լուծույթի և արյան միջև:
- Ստուգիչ լուծույթը կարող է հետք թողնել գործվածքների վրա: Հետքերը հեռացրեք՝ օճառով և ջրով լվանալով:

Ստուգիչ թեստ կատարելը

Ձեզ հարկավոր է չափող սարք, թեստի շերտ և 1-ին կամ 2-րդ մակարդակի ստուգիչ լուծույթ:

1

Ստուգեք պիտանելիության ժամկետը թեստի շերտերի տարայի վրա: Մի՛ օգտագործեք պիտանելիության ժամկետը լրացած թեստի շերտեր:

3 Ստուգիչ թեստեր

2

Թեստի շերտերի տարայից թեստի մի շերտ հանեք:

Կափարիչն ամուր փակեք:

3

Թեստի շերտի մետաղական ծայրը մտցրեք չափող սարքի մեջ: Չափող սարքը կմիանա:

Կհայտնվի թարթող կաթիլի նշան:

4

Ընտրեք ստուգիչ լուծույթը՝ թեստ կատարելու համար: Լուծույթի մակարդակը կմուտքագրեք թեստի ավելի ուշ փուլում:

5

Հանեք շշի կափարիչը: Շշի ծայրը սրբեք անձեռոցիկով: Սեղմեք շիշը, մինչև ծայրին հայտնվի մի փոքր կաթիլ:

6

Կաթիլը հպեք թեստի շերտի **դեղին ծայրին**: Թեստի շերտի վրա ստուգիչ լուծույթ մի՛ դրեք:

Կհայտնվի թարթող ավազի ժամացույցի նշանը թեստի շերտի վրա բավականաչափ ստուգիչ լուծույթ լինելու դեպքում:

7

կամ

Կհայտնվի ստուգիչ թեստի արդյունքը: Սեղմեք չափող սարքի կոճակը:

8

կամ

Եթե դուք թեստ եք անցկացրել 1-ին մակարդակի ստուգիչ լուծույթով, ապա կհայտնվի L-1 էկրանը: Սեղմեք և պահեք չափող սարքի կոճակը՝ հաստատելու համար, որ թեստն անցկացրել եք 1-ին մակարդակի ստուգիչ լուծույթով:

Եթե դուք թեստ եք անցկացրել 2-րդ մակարդակի ստուգիչ լուծույթով, ապա կհայտնվի L-2 էկրանը: Սեղմեք և պահեք չափող սարքի կոճակը՝ հաստատելու համար, որ թեստն անցկացրել եք 2-րդ մակարդակի ստուգիչ լուծույթով:

Սեղմեք չափող սարքի կոճակը՝ փոխարկելու համար L-1-ի և L-2-ի միջև:

9

կամ

OK հայտնվում է, երբ ստուգիչ թեստի արդյունքը միջակայքի սահմաններում է:

Err հայտնվում է, երբ ստուգիչ թեստի արդյունքը միջակայքից դուրս է:

10

Շշի ծայրը սրբեք անձեռոցիկով: Շիշն ամուր փակեք կափարիչով:

Հանեք և դեն նետեք օգտագործված թեստի շերտը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Չափող սարքն անջատվում է հաջող թեստի անցկացումից 90 վայրկյան անց կամ թեստի շերտի հանումից 15 վայրկյան հետո, եթե այլ գործողություն չի կատարվել:

Միջակայքի սահմաններից դուրս գտնվող ստուգիչ թեստերի արդյունքները հասկանալը

⚠ ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Ստուգիչ թեստերի արդյունքների միջակայքերը տպված են թեստի շերտերի տարայի պիտակի վրա: Եթե ստուգիչ թեստի արդյունքը միջակայքից դուրս է, ստուգեք այս ցուցակը, որը կօգնի լուծել խնդիրը:

Ստուգումներ՝ խնդիրների լուծման նպատակով	**Գործողություն**
Թեստի շերտերը կամ ստուգիչ լուծույթները ժամկետա՞նց էին:	Դեն նետեք թեստի շերտերը կամ ստուգիչ լուծույթները, եթե դրանցից մեկնումեկի պիտանելիության ժամկետը լրացել է: Եթե ստուգիչ լուծույթը բացվել է ավելի քան 3 ամիս առաջ, դեն նետեք դա: Կրկնեք ստուգիչ թեստը պիտանելիության ժամկետը չլրացած թեստի շերտով և պիտանելիության ժամկետը չլրացած ստուգիչ լուծույթով:
Օգտագործելուց առաջ սրբեցի՞ք ստուգիչ լուծույթի շիշ ծայրը:	Շշի ծայրը սրբեք անձեռոցիկով: Կրկնեք ստուգիչ թեստը նոր թեստի շերտով և ստուգիչ լուծույթի թարմ կաթիլով:

3 Ստուգիչ թեստեր

Ստուգումներ՝ խնդիրների լուծման նպատակով	**Գործողություն**
Թեստի շերտերի տարայի և ստուգիչ լուծույթի շիշ կափարիչներն միշտ ամուր փակվա՞ծ են եղել:	Թեստի շերտերը կամ ստուգիչ լուծույթը փոխարինեք նորերով, եթե կարծում եք, որ դրանցից որևէ մեկը որոշ ժամանակ մնացել է բաց վիճակում: Կրկնեք ստուգիչ թեստը:
Թեստի շերտերի տարայից թեստի շերտը հանելուց հետո անմիջապես օգտագործվե՞լ է:	Կրկնեք ստուգիչ թեստը նոր թեստի շերտով և ստուգիչ լուծույթի թարմ կաթիլով:
Թեստի շերտերը և ստուգիչ լուծույթները պահպանվե՞լ են զով, չոր տեղում:	Կրկնեք ստուգիչ թեստը՝ պատշաճ կերպով պահպանված թեստի շերտով կամ ստուգիչ լուծույթով:
Դուք հետևե՞լ եք հրահանգներին:	Տեսեք Ստուգիչ թեստեր գլուխը և կրկնեք ստուգիչ թեստը:
Ստուգիչ թեստը կատարելիս ընտրեցի՞ք ստուգիչ լուծույթի ճիշտ մակարդակը՝ 1-ին կամ 2-րդ:	Եթե ընտրել եք սխալ ստուգիչ լուծույթի մակարդակ, միևնույն է, կարող եք ստուգիչ թեստի արդյունքը համեմատել թեստի շերտերի տարայի վրա տպված միջակայքին:
Դեռևս վստահ չե՞ք, որ խնդիրը լուծվել է:	Դիմեք Roche ընկերությանը:

Ընդհանուր ակնարկ

- Չափող սարքն ավտոմատ կերպով հիշողության մեջ պահպանում է առնվազն 720 արյան մեջ գլյուկոզայի մակարդակի արդյունքներ, սակայն միայն վերջին արդյունքը և ձեր 7, 30 և 90 օրվա միջին ցուցանիշները կարելի է տեսնել չափող սարքում: Արյան մեջ գլյուկոզայի մակարդակի պահպանված արդյունքները դիտելու համար դրանք նախ փոխանցեք համատեղելի ծրագրային հավելվածի մեջ:
- Չափող սարքն ավտոմատ կերպով հիշողության մեջ պահպանում է առնվազն 30 ստուգիչ թեստի արդյունք, սակայն միայն ընթացիկ արդյունքը կարելի է տեսնել չափող սարքում: Պահպանված ստուգիչ թեստերի արդյունքները դիտելու համար դրանք նախ փոխանցեք համատեղելի ծրագրային հավելվածի մեջ:
- Եթե 90-օրյա ժամկետում կատարվում է արյան մեջ գլյուկոզայի մակարդակի 720-ից ավելի չափման թեստ, միայն վերջին 720 թեստի արդյունքներն են ներառվում 90-օրյա միջինի մեջ:
- Ստուգիչ թեստերի արդյունքները ներառված չեն 7, 30 և 90-օրյա միջին արդյունքներում:

⚠ ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Մի՛ փոխեք ձեր թերապիան՝ ելնելով հիշողության մեջ պահպանված որևէ առանձին թեստի արդյունքից: Խոսեք ձեր բժշկի հետ՝ նախքան թերապիան փոխելը հիշողության մեջ պահպանված թեստերի արդյունքների հիման վրա:

Արյան մեջ գլյուկոզայի մակարդակի վերջին արդյունքի դիտումը

1

Երբ չափող սարքն անջատված է, սեղմեք չափող սարքի կոճակը՝ այն միացնելու համար: Վերջին թեստի արդյունքի նշանը ↩ ցույց է տալիս, որ դուք դիտում եք ձեր արյան մեջ գլյուկոզայի մակարդակի վերջին արդյունքը:

Թեստի միջին արդյունքների դիտումը

Չափող սարքն օգտագործում է ձեր արյան մեջ գլյուկոզայի մակարդակի բոլոր արդյունքները անցած 7, 30 կամ 90 օրվա ընթացքում՝ մեկ թիվ հաշվարկելու համար: Այս թիվը կոչվում է միջին, և օգնում է ձեզ հասկանալ ձեր արյան մեջ գլյուկոզայի մակարդակի արդյունքները տվյալ ժամանակահատվածում:

1



Երբ չափող սարքն անջատված է, սեղմեք չափող սարքի կոճակը՝ այն միացնելու համար: Սեղմեք չափող սարքի կոճակը՝ տեսնելու համար 7, 30 և 90 օրվա միջինները:

Ընդհանուր ակնարկ

Չափող սարքի և բջջային սարքի միջև կապի ստեղծումը կոչվում է կցորդում: Ձեզ հարկավոր կլինի ձեր բջջային սարքում ունենալ հավելված, որը կարող է ընդունել չափող սարքի տվյալները: Դուք կարող եք օգտագործել այդ հավելվածը՝ անլար և ավտոմատ կերպով համաժամեցնելու ձեր շաքարային դիաբետի տվյալները չափող սարքի և բջջային սարքի միջև:

Կցորդում

Չափող սարքը կարող է միաժամանակ կցորդվել միայն 1 սարքի հետ: Երկրորդ սարքին կցորդումը ջնջում է առաջին կցորդումը:

Չափող սարքը և կցորդվող սարքը պետք է լինեն միմյանցից 1 մետր հեռավորության սահմաններում:

1

Ձեր բջջային սարքում

Բացեք հավելվածը և ընտրեք **Կցորդել չափող սարքը**: Եթե պահանջվում է, միացրեք Bluetooth-ը:

2

Ձեր չափող սարքում

Երբ չափող սարքն անջատված է, սեղմեք և պահեք չափող սարքի կոճակը, մինչև հայտնվի Bluetooth-ի նշանը: Կհայտնվեն ու կթարթեն կցորդման և անլար հաղորդակցման նշանները:

3

Ձեր բջջային սարքում

Հավելվածի մեջ գտնված չափող սարքերի ցանկից ընտրեք ձեր չափող սարքը: Եթե պահանջվում է, մուտքագրեք 6-նիշանոց PIN համարը, որը գտնվում է ձեր չափող սարքի հետևի մասում:

4

Ձեր չափող սարքում

կամ

OK հայտնվում է, երբ կցորդումը հաջողվել է: **Err** հայտնվում է, երբ կցորդումը չի հաջողվել:

Անլար հաղորդակցմամբ տվյալների փոխանցում

Եթե չափող սարքը կցորդված է բջջային սարքի հետ և Bluetooth-ը միացված է, ձեր թեստի արդյունքները ավտոմատորեն կուղարկվեն կցորդված սարքին:

Bluetooth-ի անջատումը

Անջատեք Bluetooth-ը՝ անլար հաղորդակցումը անջատելու համար (թռիչքի ռեժիմ): Bluetooth-ի անջատումը կցորդումից չի անջատի ձեր չափող սարքը:

1



Երբ չափող սարքն անջատված է, սեղմեք չափող սարքի կոճակը՝ այն միացնելու համար: Կհայտնվի վերջին թեստի արդյունքի էկրանը:

2

Սեղմեք և պահեք չափող սարքի կոճակը, մինչև անհետանա Bluetooth-ի նշանը:

Bluetooth-ի միացումը

Եթե Bluetooth-ն անջատել եք, կատարեք հետևյալ քայլերը՝ այն կրկին միացնելու համար: Դա կակտիվացնի անլար հաղորդակցումը ձեր բջջային սարքի հետ:

1

Երբ չափող սարքն անջատված է, սեղմեք չափող սարքի կոճակը՝ այն միացնելու համար: Կհայտնվի վերջին թեստի արդյունքի էկրանը:

2



Սեղմեք և պահեք չափող սարքի կոճակը, մինչև հայտնվի Bluetooth-ի նշանը:

Չափող սարքի միացումը համակարգչին՝ USB մալուխով

Կատարեք հետևյալ քայլերը՝ համակարգչով շաքարային դիաբետի կառավարման ծրագիր մուտք գործելու համար: Դուք կարող եք օգտագործել այս ծրագիրը՝ պահպանված արդյունքները դիտելու, չափող սարքի ժամանակը և ամսաթիվը սահմանելու և թիրախային միջակայքը փոխելու համար:

1

Միացրեք USB մալուխի բարակ ծայրը չափող սարքին:

2



Միացրեք USB մալուխի հաստ ծայրը համակարգչի USB մուտքին:

Եթե չափող սարքն անջատված է, կմիանա:

3

Գործարկեք շաքարային դիաբետի կառավարման ծրագիրը և սկսեք տվյալների փոխանցումը:

4

Չափող սարքը տվյալները փոխանցում է ծրագրին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

USB մալուխը չի լիցքավորում չափող սարքի մարտկոցները: Ավարտելուց հետո հանեք USB մալուխը:

Չափող սարքի սպասարկումը

Ամեն անգամ, երբ չափող սարքը միացնում եք, սարքը ինքնաշխատ կերպով ստուգում է իր իսկ համակարգերը և ձեզ տեղեկացնում է, երբ ինչ-որ բան սխալ է լինում: Տե՛ս այս գլխի Հաղորդագրություններ սխալների վերաբերյալ բաժինը:

Եթե չափող սարքը վայր եք գցել կամ կարծում եք, որ արդյունքները ստույգ չեն, դիմեք Roche ընկերությանը:

⚠ ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Նոր և օգտագործված մարտկոցները հեռու պահեք երեխաներից: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս այս Օգտագործողի ձեռնարկի Ներածություն բաժնում բերված զգուշացումը:

Մարտկոցների փոխումը

1



Բացեք չափող սարքի հակառակ կողմում գտնվող մարտկոցի խցիկի դռնակը՝ սեղմելով ելուստը սլաքի ուղղությամբ և դռնակը դեպի վեր քաշելով:

2



Հանեք հին մարտկոցները: Սեղմեք և պահեք չափող սարքի կոճակն առնվազն 2 վայրկյան:

3



Նոր մարտկոցները տեղադրեք ելուստների տակ՝ **(+) կողմը դեպի վերև**: Մարտկոցի խցիկի դռնակը նորից հրեք տեղը և չխկոցով փակեք:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- Միշտ ունեցեք պահեստային մարտկոցներ:
- Մարտկոցի օգտագործման ժամկետը կարող է տարբերվել՝ կախված այնպիսի գործոններից, ինչպիսիք են ջերմաստիճանը և մարտկոցի արտադրողը:
- Չափող սարքն օգտագործում է երկու 3 վոլտանոց լիթիումային մանր մարտկոց՝ մետաղադրամի տեսքով, տեսակը՝ CR2032: Այս տեսակի մարտկոցը կարելի է գտնել բազմաթիվ խանութներում:

- Երկու մարտկոցները միշտ միաժամանակ փոխեք և միևնույն ապրանքանիշի մարտկոցներով:
- Մարտկոցները փոխելիս չափող սարքի տվյալները չեն կորչում:

Չափող սարքի էկրանի ստուգումը

1



Երբ չափող սարքն անջատված է, սեղմեք չափող սարքի կոճակը՝ այն միացնելու համար: 30 օրվա միջին արդյունքի էկրանը ցուցադրելու համար երկու անգամ սեղմեք չափող սարքի կոճակը:

2



Սեղմեք և պահեք չափող սարքի կոճակը, մինչև էկրանի բոլոր հատվածները երևան: Ստուգեք չափող սարքի էկրանը, թե արդյոք որոշ հատվածներ բացակայում են: Բոլոր հատվածները պետք է երևան, ինչպես ցուցադրված է վերը նշված պատկերում: Եթե էկրանի պատկերից որևէ հատված բացակայում է, կապ հաստատեք Roche-ի հետ, քանի որ չափող սարքը կարող է խնդիր ունենալ:

Չափող սարքի մաքրումը և ախտահանումը

Չափող սարքը զերծ պահեք փոշուց: Եթե կարիք կա դա մաքրելու կամ ախտահանելու, ուշադիր հետևեք այս ուղենիշներին, որպեսզի սարքը հնարավորինս լավ աշխատի:

⚠ ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

- **Եթե չափող սարքն օգտագործվում է երկրորդ անձի կողմից, ով օգնում է թեստ անցկացնել օգտագործողին, ապա չափող սարքը պետք է ախտահանվի՝ նախքան երկրորդ անձի կողմից օգտագործումը:**
- **Արյան մեջ գլյուկոզայի մակարդակի ստուգում կամ ստուգիչ թեստ կատարելիս մի՛ մաքրեք կամ ախտահանեք չափող սարքը:**
- **Թույլ մի՛ տվեք, որ չափող սարքի որևէ բացվածքի մեջ հեղուկ անցնի:**
- **Ոչինչ մի՛ ցողեք անմիջապես չափող սարքի վրա:**
- **Չափող սարքը մի՛ ընկղմեք հեղուկի մեջ:**

Երբ մաքրել կամ ախտահանել չափող սարքը.

- Մաքրեք չափող սարքը՝ տեսանելի կեղտը կամ այլ նյութերը հեռացնելու համար:
- Ախտահանեք չափող սարքը ամեն հիվանդի օգտագործումից հետո:

Որ հատվածը մաքրել կամ ախտահանել.

- Ճեղքերի և բացվածքների շրջանը:
- Չափող սարքի էկրանը:
- Չափող սարքի ամբողջ մակերեսը:

1

Համոզվեք, որ չափող սարքն անջատված է:

Զգուշորեն սրբեք չափող սարքի մակերեսը՝ հետևյալ լուծույթներից որևէ մեկով թեթևակի խոնավեցված փափուկ շորով (քամեք հավելյալ հեղուկը)՝

Չափող սարքը մաքրելու համար

Սպասք լվանալու մեղմ հեղուկ՝ ջրի հետ խառնված

Չափող սարքն ախտահանելու համար

70 %-անոց իզոպրոպիլային սպիրտ

Ծանոթագրություն. Ախտահանման ընթացքում համոզվեք, որ չափող սարքի մակերեսին առնվազն 2 րոպե մնա իզոպրոպիլային սպիրտը: Հնարավոր է՝ անհրաժեշտ լինի լրացուցիչ սրբել մակերեսը իզոպրոպիլային սպիրտով խոնավեցված շորով:

2

Չափող սարքը մանրակրկիտ չորացրեք փափուկ շորով

Սխալի մասին հաղորդագրություն

⚠ ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

- **Երբեք թերապիայի մասին որոշումներ մի՛ կայացրեք սխալի մասին հաղորդագրության հիման վրա:**
- **Եթե ունեք մտահոգություններ կամ տեսնում եք այլ սխալի մասին հաղորդագրություն, դիմեք Roche ընկերությանը:**

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սխալի կոդը և **Err** հաղորդագրությունը միմյանց կհերթագայեն էկրանին բոլոր կոդավորված սխալի մասին հաղորդագրությունների (E-1-ից մինչև E 14) դեպքում:

Չափող սարքը չի միանում, կամ էկրանը դատարկ է:

- Մարտկոցները լիցքաթափված են:

Տեղադրեք նոր մարտկոցներ:

- Էկրանը վնասված է: / Չափող սարքը թերություն ունի:

Դիմեք Roche ընկերությանը:

- Ծայրահեղ ջերմաստիճաններ:

Չափող սարքը տեղափոխեք այնպիսի վայր, որտեղ ջերմաստիճանը սահմանված միջակայքում է:

Չափող սարքը միացված է համակարգչին, բայց արյան մեջ գլյուկոզայի մակարդակի ստուգումը կամ ստուգիչ թեստը հնարավոր չէ կատարել:

ԿԱ՛Մ հանեք USB մալուխը և կատարեք արյան մեջ գլյուկոզայի մակարդակի ստուգումը կամ ստուգիչ թեստը, ԿԱ՛Մ հանեք թեստի շերտը և սկսեք տվյալների փոխանցումը:

Հնարավոր չեղավ չափող սարքը կցորդել բջջային սարքին:

Նորից փորձեք կցորդել:

Մարտկոցների լիցքը գրեթե սպառվել է:

Փոխեք մարտկոցները: Եթե մարտկոցները փոխելուց հետո Նշանը նորից հայտնվի, մարտկոցները նորից հանեք, առնվազն 2 վայրկյան սեղմեք ու պահեք չափող սարքի կոճակը, ապա մարտկոցները կրկին տեղադրեք:

(Սխալի կոդը և **Err** հաղորդագրությունը միմյանց կիերթագայեն էկրանին:)

Թեստի շերտը կարող է վնասված լինել, ճիշտ տեղադրված չլինել, կամ նախապես օգտագործված է եղել:

Հանեք և նորից տեղադրեք թեստի շերտը, կամ, եթե վնասված է կամ նախապես օգտագործված, փոխարինեք նորով:

(Սխալի կոդը և **Err** հաղորդագրությունը միմյանց կիերթագայեն էկրանին:)

Տեղի է ունեցել չափող սարքի կամ թեստի շերտի սխալ:

Այս սխալի մասին հաղորդագրությունը կարող է հայտնվել, եթե թեստի շերտերի տարայի կափարիչը ամուր փակված չի եղել: Թեստի շերտերը կարող են վնասված լինել ոչ ճիշտ պահպանելու կամ դրանց հետ ոչ ճիշտ վարվելու հետևանքով:

Երբեք թերապիայի մասին որոշումներ մի՛ կայացրեք սխալի մասին հաղորդագրության հիման վրա:

Կրկնեք արյան մեջ գլյուկոզայի թեստը: Եթե E-3 սխալի մասին հաղորդագրությունն է հայտնվում երկրորդ անգամ, ապա ստուգիչ լուծույթով և նոր թեստի շերտով կատարեք ստուգիչ թեստ: Տե՛ս «Ստուգիչ թեստ կատարելը» բաժինը «Ստուգիչ թեստեր» գլխում:

Եթե շարունակում եք ստանալ E-3 սխալի մասին հաղորդագրությունը, օգտագործեք այլընտրանքային մեթոդ ձեր արյան մեջ գլյուկոզայի մակարդակի ստուգման համար, ինչպիսիք են պահեստային չափող սարքի և թեստի շերտի օգտագործումը: Եթե այլընտրանքային մեթոդը ցույց է տալիս արյան մեջ գլյուկոզայի չափազանց բարձր արդյունք, կամ եթե այլընտրանքային մեթոդը հասանելի չէ, **անմիջապես դիմեք ձեր բուժաշխատողին**:

Հազվագյուտ դեպքերում E-3 սխալի մասին հաղորդագրությունը կարող է ցույց տալ, որ ձեր արյան մեջ գլյուկոզայի մակարդակը ծայրահեղ բարձր է և համակարգի չափման միջակայքից դուրս: **Տե՛ս «Արյան մեջ գլյուկոզայի մակարդակի արտասովոր արդյունքներ» բաժինը «Արյան մեջ գլյուկոզայի մակարդակի չափման թեստեր» գլխում՝ սխալի մասին հաղորդագրության այլ հնարավոր պատճառների համար**:

(Սխալի կոդը և **Err** հաղորդագրությունը միմյանց կհերթագայեն էկրանին:)

Չափման նպատակով թեստի շերտին քսվել է ոչ բավարար քանակի արյուն կամ ստուգիչ լուծույթ, կամ դրվել է թեստն սկսվելուց հետո:

Դեն նետեք թեստի շերտը և կրկնեք արյան մեջ գլյուկոզայի մակարդակի չափման կամ ստուգիչ թեստը:

(Սխալի կոդը և **Err** հաղորդագրությունը միմյանց կհերթագայեն էկրանին:)

Արյունը կամ ստուգիչ լուծույթը դրվել է թեստի շերտին նախքան էկրանին առկայծող արյան կաթիչ հայտնվելը:

Դեն նետեք թեստի շերտը և կրկնեք արյան մեջ գլյուկոզայի մակարդակի չափման կամ ստուգիչ թեստը:

(Սխալի կոդը և **Err** հաղորդագրությունը միմյանց կերթագայեն էկրանին:)

Էլեկտրոնային սխալ է տեղի ունեցել:

Հանեք մարտկոցները, առնվազն 2 վայրկյան սեղմեք և պահեք չափող սարքի կոճակը և կրկին տեղադրեք մարտկոցները: Կատարեք արյան մեջ գլյուկոզայի մակարդակի չափման կամ ստուգիչ թեստ:

(Սխալի կոդը և **Err** հաղորդագրությունը միմյանց կերթագայեն էկրանին:)

Ջերմաստիճանը բարձր կամ ցածր է համակարգին հատուկ միջակայքից:

Համակարգի օգտագործման պայմաններին ծանոթացեք թեստի շերտերի փաթեթի ներդիրում: Տեղափոխվեք համապատասխան պայմաններով վայր և կրկնեք արյան մեջ գլյուկոզայի մակարդակի չափման կամ ստուգիչ թեստը: Չափող սարքն արհեստական կերպով մի՛ տաքացրեք կամ հովացրեք:

(Սխալի կոդը և **Err** հաղորդագրությունը միմյանց կերթագայեն էկրանին:)

Հնարավոր է՝ մարտկոցների լիցքը սպառվել է:

Նորից միացրեք չափող սարքը: **Եթե գտնվում եք ցուրտ միջավայրում, տեղափոխվեք ավելի տաք ջերմաստիճանով վայր և նորից ստուգեք**: Եթե հաղորդագրությունը շարունակում է հայտնվել մի քանի փորձերից հետո, փոխեք մարտկոցները: Եթե մարտկոցները փոխելուց հետո հաղորդագրությունը նորից հայտնվի, մարտկոցները հանեք, առնվազն 2 վայրկյան սեղմեք ու պահեք չափող սարքի կոճակը, ապա մարտկոցները կրկին տեղադրեք:

(Սխալի կոդը և **Err** հաղորդագրությունը միմյանց կիերթագայեն էկրանին:)

Հնարավոր է՝ չափող սարքի ներքին ժամացույցը հարկավոր է նորից կարգավորել:

Սեղմեք չափող սարքի կոճակը: Եթե ժամանակը և ամսաթիվը սահմանված են, ապա ձեզ հարկավոր է վերասահմանել դրանք: Տե՛ս «Ժամանակն ու ամսաթիվը» բաժինը «Ձեր նոր համակարգը» գլխում:

(Սխալի կոդը և **Err** հաղորդագրությունը միմյանց կիերթագայեն էկրանին:)

Հնարավոր է՝ թեստի շերտը վնասված է:

Կրկնեք արյան մեջ գլյուկոզայի մակարդակի ստուգումը կամ ստուգիչ թեստը՝ նոր թեստի շերտով:

(Սխալի կոդը և **Err** հաղորդագրությունը միմյանց կիերթագայեն էկրանին:)

Ձեր արյան նմուշը կարող է պարունակել ասկորբատի բարձր մակարդակ:

Դիմեք ձեր բուժաշխատողին:

(Սխալի կոդը և **Err** հաղորդագրությունը միմյանց կիերթագայեն էկրանին:)

Թեստի շերտի ճեղքում կարող է առկա լինել հեղուկ կամ օտար նյութ:

Հեռացրեք և նորից տեղադրեք թեստի շերտը կամ կրկնեք արյան մեջ գլյուկոզայի մակարդակի ստուգման կամ ստուգիչ թեստը նոր թեստի շերտով: Եթե սխալը շարունակվի, դիմեք Roche-ին:

(Սխալի կոդը և **Err** հաղորդագրությունը միմյանց կիերթագայեն էկրանին:)

Տեղի է ունեցել էլեկտրոնային սխալ:

Դիմեք Roche ընկերությանը:

Արյան մեջ գլյուկոզայի մակարդակը կարող է ավելի բարձր լինել, քան համակարգի չափման միջակայքը:

Տես «Արյան մեջ գլյուկոզայի մակարդակի չափման թեստեր» գլխի «Արյան մեջ գլյուկոզայի մակարդակի արտասովոր արդյունքներ» բաժինը:

Արյան մեջ գլյուկոզայի մակարդակը կարող է ավելի ցածր լինել, քան համակարգի չափման միջակայքը:

Տես «Արյան մեջ գլյուկոզայի մակարդակի չափման թեստեր» գլխի «Արյան մեջ գլյուկոզայի մակարդակի արտասովոր արդյունքներ» բաժինը:

8 Տեխնիկական տեղեկություններ

Արտադրատեսակի սահմանափակումները

Արտադրատեսակի մասնագրերի և սահմանափակումների վերաբերյալ վերջին տեղեկությունների համար տե՛ս թեստի շերտերի և ստուգիչ լուծույթների հետ փաթեթավորված գրականությունը:

Մասնագրեր	
Արյան ծավալը Նմուշի տեսակը Չափման ժամանակը Չափման միջակայքը Թեստի շերտի պահպանման պայմանները Համակարգի օգտագործման պայմանները	Նայեք թեստի շերտերի փաթեթի ներդիրը:
Չափող սարքի պահպանման պայմանները	Ջերմաստիճան՝ -25–70 °C
Հիշողության տարողությունը	Արյան մեջ գլյուկոզայի մակարդակի 1 արդյունք և 7, 30 և 90-օրյա թեստի միջին արդյունքներ (արյան մեջ գլյուկոզայի մակարդակի առնվազն 720 և ստուգիչ թեստերի առնվազն 30 արդյունքները նույնպես պահպանվում են և կարող են դիտվել արտաքին ծրագրով):
Ավտոմատ անջատում	Թեստը կատարելուց 90 վայրկյան հետո, թեստի շերտը հանելուց 15 վայրկյան անց կամ էկրանին վերջին թեստի արդյունքի ցուցադրումից 5 վայրկյան հետո:
Հոսանքի մատակարարում	Երկու 3 վոլտանոց լիթիումային մարտկոցներ (մետաղադրամի տեսքով, տեսակը՝ CR2032)
Էկրան	LCD
Չափերը	77,1 × 48,6 × 15,3 մմ (երկարություն, լայնություն, բարձրություն)
Քաշը	Մոտ. 40 գ (մարտկոցներով)
Կառուցվածքը	Ձեռքի

8 Տեխնիկական տեղեկություններ

Մասնագրեր	
Պաշտպանվածության կարգը	III
Արյան մեջ գլյուկոզայի մակարդակը չափող սարքի տեսակը	The Accu-Chek Instant չափող սարքը հարմար է շարունակական օգտագործման համար:
Ստուգիչ լուծույթի պահպանման պայմանները	Նայեք ստուգիչ լուծույթի փաթեթի ներդիրը:
Continua CERTIFIED Միջերեսներ	USB՝ micro-B կապակցիչ, Bluetooth ցածր էներգասպառման տեխնոլոգիա, Continua Certified® Continua հավաստագիր ունեցող մենեջերի համար:
Ռադիոհաճախականության կապակցելիություն	Bluetooth ցածր էներգասպառման տեխնոլոգիա, որը գործում է 2402 ՄՀց-ից 2480 ՄՀց հաճախականության միջակայքում՝ 0 դԲմ (1 մՎտ) մաքսիմալ հաղորդվող հզորությամբ:

Էլեկտրամագնիսական համատեղելիություն՝ արյան մեջ գլյուկոզայի մակարդակը չափող այս սարքը բավարարում է էլեկտրամագնիսական արտանետումների պահանջները ըստ EN 61326-2-6-ի: Այսպիսով, դրա էլեկտրամագնիսական արտանետումները ցածր են: Միջամտություն այլ էլեկտրասարքերի աշխատանքին չի ակնկալվում:

Աշխատանքի վերլուծություն՝ նայեք թեստի շերտերի փաթեթի ներդիրը:

Թեստի սկզբունքը՝ նայեք թեստի շերտերի փաթեթի ներդիրը:

Համապատասխանության հայտարարագիր՝ Սույնով Roche-ն հայտարարում է, որ Accu-Chek Instant տիպի ռադիոսարքավորումը, որ արյան մեջ գլյուկոզայի մակարդակը չափող սարք է, համապատասխանում է 2014/53/EՍ հրահանգին: ԵՄ համապատասխանության հայտարարագրի ամբողջական տեքստը հասանելի է հետևյալ ինտերնետային հասցեով՝ http://declarations.accu-chek.com

Հաղորդակցության արձանագրություն՝
Accu-Chek Instant արյան մեջ գլյուկոզայի մակարդակը չափող սարքն ունի «Continua» հավաստագիր: «Continua» հավաստագիր ունենալը նշանակում է, որ այս ապրանքը համապատասխանում է գործող IEEE 11073-10417 ստանդարտներին, և որ այն փորձարկվել և վավերացվել է 2015 թ.-ին Continua նախագծման ուղեցույցին համապատասխան, որը ներառում է արյան մեջ գլյուկոզայի մասնագրերը Bluetooth-ի, *Bluetooth SIG Glucose Profile, Տարբերակ 1.0-ի* և *Bluetooth SIG, Glucose Service, Տարբերակ 1.0-ի* համար:

Տեղեկություններ արտադրատեսակի անվտանգության վերաբերյալ

⚠ ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

- **Ուժեղ էլեկտրամագնիսական դաշտերը կարող են խանգարել գլյուկոզայի մակարդակը չափող սարքը ճիշտ աշխատանքին: Մի՛ օգտագործեք գլյուկոզայի մակարդակը չափող սարքը էլեկտրամագնիսական ուժեղ ճառագայթման աղբյուրների մոտ:**
- **Էլեկտրոստատիկ լիցքաթափումից խուսափելու համար գլյուկոզայի մակարդակը չափող սարքը մի՛ օգտագործեք շատ չոր միջավայրում, հատկապես եթե առկա են սինթետիկ նյութեր:**

Չափող սարքը դեն նետելը

⚠ ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

- Արյան մեջ գլյուկոզայի մակարդակի չափման թեստ կատարելիս չափող սարքը կարող է շփվել արյան հետ: Ուստի, արյան մեջ գլյուկոզայի մակարդակը չափող օգտագործված սարքերը կարող են պարունակել վարակման վտանգ: Չափող սարքը դեն նետելուց առաջ հանեք մարտկոցը կամ մարտկոցները: Օգտագործված չափող սարքերը դեն նետեք համաձայն ձեր երկրում կիրառելի կանոնակարգերի: Ճիշտ գործելակերպերի մասին տեղեկանալու համար կապվեք ձեր տեղական խորհրդի կամ պետական մարմնի հետ:
- Արյան մեջ գլյուկոզայի մակարդակը չափող սարքը դուրս է Եվրոպական 2012/19/EU հրահանգի շրջանակից (հրահանգ թափոն հանդիսացող էլեկտրական և էլեկտրոնային սարքերի վերաբերյալ (WEEE)):
- Դեն նետեք օգտագործված մարտկոցները համաձայն տեղական բնապահպանական կանոնակարգերի:

8 Տեխնիկական տեղեկություններ

Նշանների բացատրություն

Այս նշանները կարող են ի հայտ գալ փաթեթավորման վրա, տեսակի նշման թիթեղիկին և Accu-Chek Instant չափող սարքի ցուցումներում:

	Նայել օգտագործման վերաբերյալ ցուցումները
	Կենսաբանական վտանգներ՝ օգտագործված չափող սարքերը վարակի վտանգ են ներկայացնում:
	Զգուշացում. Նայել անվտանգությանն առնչվող գրառումները՝ այս արտադրատեսակին ուղեկցող օգտագործման վերաբերյալ ցուցումներում:
	Ջերմաստիճանի սահմանափակում (պահպանման ջերմաստիճան)
	Պիտանելիության ժամկետը
	Արտադրող
REF	Կատալոգային համարը
LOT	Խմբաքանակի ծածկագիրը
IVD	In vitro ախտորոշիչ բժշկական սարք
GTIN	Առևտրային միավորի գլոբալ նույնականացման համարը
SN	Սերիական համարը
CE 0123	Այս արտադրատեսակը բավարարում է In vitro ախտորոշիչ բժշկական սարքերի վերաբերյալ Եվրոպական 98/79/EC հրահանգի պահանջները:
	3 Վոլտանոց մետաղադրամի տեսքով, տեսակը՝ CR2032
	Նոր և օգտագործված մարտկոցները հեռու պահեք երեխաներից:

Լրացուցիչ պիտույքներ

Թեստի շերտեր՝ Accu-Chek Instant թեստի շերտեր

Ստուգիչ լուծույթներ՝ Accu-Chek Instant ստուգիչ լուծույթներ

Տեղեկություններ բուժաշխատողների համար

⚠ ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Բուժաշխատողներ. Հետևեք ձեր բուժհաստատության՝ վարակների կանխարգելման ընթացակարգերին: Բուժաշխատողների համար լրացուցիչ տեղեկությունների համար նայեք թեստի շերտերի փաթեթի ներդիրը:

Նմուշների հետ գործ ունենալը

Արյունով աղտոտված առարկաների հետ գործ ունենալիս միշտ ձեռնոցներ կրեք: Միշտ հետևեք ընդունված ընթացակարգերին, որոնք վերաբերում են մարդկային նյութով հավանականորեն աղտոտված առարկաների հետ վարվելուն: Հետևեք ձեր լաբորատորիայի կամ հիմնարկի հիգիենայի և անվտանգության քաղաքականությանը: Արյուն վերցնելու ընտրված կենտրոնը նախապատրաստեք ըստ բուժհաստատության քաղաքականության:

Ընդունելի նմուշների տեսակների, հակամակարդիչների և գործելակերպերի ցուցումների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար նայեք թեստի շերտերի փաթեթի ներդիրը:

Հիվանդներին այլընտրանքային տեղերից թեստ կատարելու խորհուրդ տալը

Այլընտրանքային տեղերից թեստ (AST) կատարելու խորհուրդ տալու վերաբերյալ որոշումներ ընդունելիս հարկավոր է հաշվի առնել հիվանդի շահագրգռվածությունը և գիտելիքների մակարդակը, ինչպես նաև շաքարային դիաբետին և այլընտրանքային տեղերից թեստերին (AST) առնչվող նկատառումները հասկանալու նրա ունակությունը: Եթե մտածում եք այլընտրանքային տեղերից թեստ (AST) խորհուրդ տալ ձեր հիվանդներին, ապա պետք է հասկանաք, որ կա զգալի տարբերության հավանականություն՝ մատի ծայրից կամ ձեռքի ափից և նախաբազկից կամ բազկից վերցված արյունով թեստերի արդյունքների միջև: Մազանոթային ցանցի արյան կոնցենտրացիայի և ողջ մարմնի մեջ արյան հոսքի (պերֆուզիա) տարբերությունը կարող է հանգեցնել գլյուկոզայի արդյունքների տարբերությունների՝ մարմնի տարբեր տեղերից վերցված նմուշների տարբերությունների հետևանքով: Այս ֆիզիոլոգիական ազդեցությունները տարբեր են տարբեր անհատների մոտ և կարող են տարբեր լինել միևնույն անհատի մոտ՝ ելնելով նրա վարքից և հարաբերական ֆիզիկական վիճակից:

Շաքարային դիաբետ ունեցող մեծահասակների՝ այլընտրանքային տեղերից թեստերի (AST) վերաբերյալ մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մարդկանց մեծ մասը ավելի արագ է պարզում իր արյան մեջ գլյուկոզայի մակարդակի փոփոխությունները մատի ծայրից կամ ձեռքի ափից վերցված արյան մեջ, քան՝ նախաբազկից կամ բազկից վերցված արյան մեջ: Սա հատկապես կարևոր է, երբ արյան մեջ գլյուկոզայի մակարդակի մակարդակներն արագորեն իջնում կամ բարձրանում են: Եթե ձեր հիվանդը սովոր է թերապիայի վերաբերյալ որոշումներ ընդունել մատի ծայրի կամ ձեռքի ափի թեստի արդյունքների հիման վրա, ապա պետք է հաշվի առնի հապաղումը կամ ուշացման ժամանակը, որն ազդում է նախաբազկից կամ բազկից վերցված արյան թեստերի արդյունքների վրա:

Երաշխիք

Կիրառելի են գնման երկրում գործող՝ սպառողական ապրանքների վաճառքի ոլորտում իրավունքների վերաբերյալ օրենքով սահմանված դրույթները:

Ցանկ

Ա

անլար հաղորդակցում
- անջատել 24
- ընդհանուր ակնարկ 23
- թռիչքի ռեժիմ 24
- կցորդում 23
- միացնել 24
- տվյալների փոխանցում 24

արյան անալիզներ այլընտրանքային տեղերից 12, 42
արյան մեջ գլյուկոզայի բարձր մակարդակ 15
արյան մեջ գլյուկոզայի մակարդակի արդյունքներ, արտասովոր 14
արյան մեջ գլյուկոզայի մակարդակի չափման թեստ, կատարում 9
արյան մեջ գլյուկոզայի ցածր մակարդակ 15
արտադրատեսակի մասնագրեր 36
արտադրատեսակի սահմանափակումները 36

Բ

բուժաշխատողներ 41

Ե

երաշխիք 43

Թ

թեստի շերտեր 8
թիրախային միջակայք 6, 11
թիրախային միջակայքի ցուցիչ 4, 11

Ժ

ժամանակն ու ամսաթիվը 6

Ի

հիպերգլիկեմիա 15
հիպոգլիկեմիա 15

Կ

կոճակ, գործառույթներ 4, 6

Մ

մարտկոցի տեսակ 26, 36
մարտկոցներ, փոխում 26
միջին արժեքներ 7, 22

Ն

նշաններ
- IVD 40
- չափող սարքի էկրան 7

Չ

չափող սարք, մաքրում և ախտահանում 28

Պ

պիտանելիության ժամկետ 8, 16
պիտույքներ 5, 41

Ս

սխալի մասին հաղորդագրություն 29
սպասարկում, չափող սարքի 26
ստուգիչ թեստի արդյունքներ, միջակայքի սահմաններից դուրս 19
ստուգիչ թեստ, կատարելը 16
ստուգիչ լուծույթ 16

Վ

վերջին թեստի արդյունքը 21

Տ

տեխնիկական տեղեկություններ 36
տեղեկություններ արտադրատեսակի անվտանգության վերաբերյալ 38
տվյալների փոխանցում
- USB 25
- անլար 23

ՎԵՐՋԻՆ ԹԱՐՄԱՑՈՒՄ՝ 2020-01

Информационный центр для стран СНГ
Республика Армения: 00 8800 0000 0808

Roche Diabetes Care GmbH
Sandhofer Strasse 116
68305 Mannheim, Germany
www.accu-chek.com

IVD

CE 0123

ACCU-CHEK և ACCU-CHEK INSTANT ապրանքանշանները Roche ընկերության ապրանքանշաններ են:

Continua CERTIFIED

CONTINUA, CONTINUA պատկերանիշները և CONTINUA CERTIFIED նշանները Continua Health Alliance խմբի ապրանքանշաններ, սպասարկման նշաններ կամ սերտիֆիկացման նշաններ են: CONTINUA ապրանքանշանը գրանցված ապրանքանշան է որոշ, բայց ոչ բոլոր երկրներում, որտեղ այս արտադրատեսակը տարածվում է:

Bluetooth® բառային նշանը և լոգոտիպերը գրանցված ապրանքային նշաններ են, որոնք պատկանում են Bluetooth SIG, Inc-ին, իսկ Roche-ի կողմից նման նշանների ցանկացած օգտագործում իրականացվում է ըստ արտոնագրի:

Մյուս բոլոր ապրանքային անուններն ու ապրանքային նշանները իրենց համապատասխան սեփականատերերի սեփականությունն են:

© 2020 Roche Diabetes Care

V1250